

տեր, մեծարգոյ տէր, ձեզ նման կպատասխանենք պարզ ու հաստութառովս՝ ՈՇ” :

Եյս օրերս Միւնխենեան համալսարանի ստուդիւթներն ևս փառաւոր հանդիսիւ շնորհակալութիւն յայանեցին Վեօլլինգերին նորա գրութեան համար և ընդ նմին խնդութիւն, որ նա պրօֆեսսօր կըմնայ համալսարանի մէջ :

Փ. Վ. արդանէան :

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Նոգևոր միաբանութիւն և ժողով հաւատացեալ Վրիստոնէից կը կոչուի Ակեղեցի :

Սուրբ գրոյց մէջ փոխաբերաբար այլ և այլ անուններ կը տրուին Ակեղեցւոյն Վրիստոսի՝ ինչպէս՝ շարան Վրէնպոսի, Վլէմի, Ժառանգութիւն և ցանկայի Բաթին Եպոս-ժոյ, Մարթին Վրէնպոսի, շօր Եպոս-ժոյ, Եյգի Տեառն, Եոր Աթօն, և Եոր Երոսաղէճէն :

Վրիստոնէական Մի Ակեղեցին յերկուս կը բաժանուի նկատմամբ աստի և երկնային կենաց անդամոցն, այսինքն՝ ի Չէնոորէալ և ի Յաղթահան :

Չինուորեալ Ակեղեցւոյ անդամք կը բաղկանան ի միաբանութենէ կենդանի հաւատացելոց ի Վրիստոս, որք տակաւին աշխարհի վերայ կելով՝ իբրև զօրականներ Վրիստոսի՝ երանական կենաց յուսով սպառազինուած, առ Եստուած և առ ընկերս անկեղծ սիրով՝ և հաստատուն հաւատով կմարտնչին ընդդէմ որոգայթից սատանայի, ընդդէմ պատրանաց

աշխարհի և ցանկութեանց մարմնոյ, մինչև ցհասանելն ի նաւահանգիստ յաւիտենական կենացն :

Իսկ Յաղթականն է ի Վրիստոս նընջեցեալ Արբոց գումար, որք ճշմարտութեամբ Եւետարանին պնդեալ, և սրբութեան զբահներով կուռ վարուած՝ մարտնչեցին հաւատոց վահանաւն յաստիս, և յաղթեցին չար այսոց մեքենայից, հակառակ կալով մեղաց՝ գործեցին զարդարութիւն, և վերասլանալով ի վերինն Արուսաղէմ (յերկինս)՝ անպատում փառաց յուսով և ակնկալութեամբ երանաւետեալք են :

Թէպէտ և ըստ հաւատոցն միաբանութեան և ըստ կոչման հաւատացելոց Մի է Ակեղեցին Եստուծոյ, բայց ըստ ժամանակին և ըստ այլ և այլ ներքին և արտաքին հանգամանաց՝ այլ և այլ անուամբք ևս կոչուած է, նախ՝ Եսահապետական Ակեղեցի՝ սկսեալ նախաստեղծ մարդոյն օրերէն՝ մինչև ցԱբրահամ, երկրորդ՝ Իսրայէլեան Ակեղեցի, որ հօրն հաւատոյ Աբրահամու և Եստուծոյ մէջ հաստատեալ ուխտիւ տեեց ցՄովսէս մեծ մարգարէ, երրորդ՝ Մովսիսական կամ զբաւոր օրինաց Ակեղեցի, որ Աինայի Եստուածային սահմանադրութեամբ ճոխանալով և ընդարձակուելով տեեց ցգալուստ Փրկչին :

Վրիստոսի Ակեղեցին Մէ է յազազս միութեանն Եստուծոյ, միութեան մկրտութեան, միութեան հաւատոյ, միութեան յուսոյ, և միոյ սիրոյ հաւատացելոցն, ևս և յազազս միոյ Մեջնորդի խաղաղութեան ընդ Եստուած և ընդ մարդիկ. Ընդհանրականէ, որ հոգւով և ճշմարտութեամբ

վերածննեալ և յանունն Ս. Արրորդութեան
 երկրպագու բոլոր հաւատացեալները յին-
 քըն ժողոված կամփոփէ, թէ Հայ, թէ
 Ռուս, թէ Հռոմայեցի, թէ Յոյն, թէ
 Եսորի եւն. բայց և այնպէս ըստ զանա-
 զանութեան աշխարհական դրից՝ և ըստ
 այլեւայլութեանց ի պաշտամունս ինչ՝
 կրկոչուի Երեւելեան և Երեւմտեան, իսկ
 ըստ տարբերութեան ազգաց, քաղաքաց
 և զաւառաց՝ կրկոչուի Ակեղեցի Հայոց,
 Ակեղեցի Յունաց, Ակեղեցի Արուսաղէ-
 մի, Ակեղեցի Ենտիոքայ, Ակեղեցի Եսիա-
 ցւոց եւն: Սակայն սոքա ամենքը Սի են, ե-
 թէ կայ սոցա մէջ միութիւն Հոգւոյ, միու-
 թիւն Մկրտութեան, Հաւատոց, հաստա-
 տունեանկեղծ սիրոյ, ևս Հաղորդութեան:

Ակեղեցին Վրիստոսի Ընդհանրական և
 համանդամայն Սոբօր է՝ ըստ սրբութեան
 Չլիտոյ իւրոյ Յիսուսի Վրիստոսի, ըստ
 սրբութեան հաւատոցն, և ըստ սրբու-
 թեան վարուց հաւատացելոց:

Եյս երեք յասկութիւններէն զատ ու-
 նի Վրիստ. Ակեղեցին չորրորդը, որ է Ե-
 սոսիւնիստիստիստ, որ կնշանակէ ոչ միայն
 ի ձեռն Եւաքելոց կամ ըստ օրինի ընտ-
 բուած և կացուցուած Յաջորդացն հաս-
 տատեալ, այլ և նոյն Եստուածեղէն Հո-
 գւոյն շնորհօք և ճշմարտութեամբ լի՝ ու-
 նի և կրպահպանէ նոցին ի Վրիստոսէ
 ուսած և ընդունած անեղծ և անարատ
 հաւատքը և քարոզութիւնքը, և հաւա-
 տացելոց միշտ կրմատակարարէ զայնոսիկ
 ողջմտութեամբ՝ առանց յաւելուածոյ և
 կրճատման՝ ըստ բացայայտ ճշմարտու-
 թեանց Աոր Ատակարանի:

Հայս վայր համառօտ դրուածներէս
 պէտք է մակարերել ուղղակի, թէ՛ երկրի

վերայ Վրիստոսի հոգւոր արքայութիւն
 բաղկացնող Աթոռիկէ Ակեղեցւոյ մէջ
 իսկապէս նախ այն Վրիստոնեայք միայն կը
 գտնուին՝ որ Ս. Չլոց մէջ կը կոչուին շնոր-
 չեալ, նոր արարած, արդար, սոբօր, ճշմարիտ
 հաստատեալ եւն. որոց անուանք զրոշմեալ
 լինելով յաւիտենական Աննացդարութեան
 մէջ՝ անտարակոյս պիտի ժառանգեն փր-
 կութիւն, զորս մինակ Եստուած կարող է
 ճանաչել և ոչ մարդը՝ թէպէտ մարգարէ
 կամ առաքեալ ևս լինի, ինչպէս Աղեա
 չճանչցաւ եօթն հազարները (Չ. Թադ-
 ԺԹ. 14: Հոմ. ԺԵ. 4), և ոչ Փիլիպ-
 պոս կարողացաւ ճանաչել զՍիմոն մոգ
 (Չործ. Ը. 13. Ա. 1—11): Ուստի չէ
 զարմանալի, զի կը գտնուին Հաւատացե-
 լոց մէջ կեղծաւորներ, խարդախներ, նեն-
 զաւոր և մոլորներ՝ կերպարանուելով ան-
 կեղծ հաւատացեալք, Վրիստոսի անխար-
 դախաշակերտք, աննենդաստուածասէրներ
 և եղբայրասէրներ, կամ պարկեշտ սրբա-
 կացներ, և իբր թէ երեւոյթներէն պար-
 զամտութեամբ պատրուած մարդիկ:

Ըստորում Աթոռիկէ Ակեղեցին է
 Վրիստոսի խորհրդական սուրբ մարմին,
 Հոգւոյն սրբոյ կենդանի տաճար, բայց և
 այնպէս ոչ ամենայն դք՝ համարելով զան-
 ձըն անգամ այս Ակեղեցւոյ, կամ երեւե-
 լապէս ի նմա գտնուելով, մինչև անգամ
 լինելով մասնակից սրբազան խորհրդոցն՝
 ճշմարտիւ նորա մէջ է: Եյո՞ դժբաղդա-
 բար բազում են այնպիսի անձինք՝ որք թէ
 և սկզբնական մեղքերէ սրբեալ են լուսա-
 ւոր Ս. Եւազանի մկրտութեամբ ծնուե-
 լով, այլ առանց զղջման և յետս դառ-
 նալոյ՝ հանապազորդեան անօրէնութեամբ
 և ներգործական մեղօք կը թաւալին ի

տիրմն դարձուլթեանց: Շատերը կան, որ թէև յեկեղեցի կը կանխեն և հոգևոր խրատներ լսել կցանկան, բայց երբէք չեն զգալ ճշմարտութեան դիտութիւնը՝ և ոչ կուզեն վարքերը: Բազումք կան՝ որ թէև բազմիցս կը մերձենան Ս. Հաղորդութեան խորհրդական Մարմնոյ և Արեան Անարարին, այլ անարժանութեամբ աւելի դատապարտութիւն կընդունին քան թէ ի վրկութիւն անձանց: Արպիսիք և այլ բազմապիսիք թէպէտ Վրիստոսի Ակեղեցւոյ և Անդաստանի մէջ իրստ շատ կրնան լինել և կը դանուին, այլ ցորենով խառնուած որոմներ, և բարեաց հետ խառնուած չարք կը համարու ն:

Վրիստոսի Մէ, Սորք, Կաթիլիկ և Աստուծոյ Ակեղեցիէն իրօք և յայտնապէս արտաքոյ կը մնան, և Արքոյ ի հաղորդութենէ, անմասն են և կը վրկուին ի վրկութենէ այն ամենայն անձինք՝ որք են 1) յայտնի կամ՝ դազանի անհաւատք, հայհոյիչք, ուրացողք և մոլորեալք. 2) ընդհանուր Ակեղեցիէն դատապարտուած հերետիկոսներ, որք յամառութեամբ և կամակորութեամբ կուրանան կամ կմերժեն ի Վրիստոս, յԱռաքելոյն և ի մարգարէից որոշակի քարոզեալ Հաւատոյ էական ճշմարտութիւնքը, կը խանգարեն Մատուածաշունչ զրոյ վարդապետութիւնքը, և իւրեանց ախորժած և լսելեաց սիրածներուն համաձայն նոր իմն և ինքնահնար վարդապետութիւնք կը յաւելուն ի կորուստ անձանց և ինքեանց լսողաց և հետեողացն. 3) վերջապէս իւրեանց Ծնօղ և Մայր Ակեղեցւոյ հաւատքէն և վարդապետութիւններէն բաժանելով զանձինս մոլորեցուցիչներու պատրանօք, և

ևս Վրիստոսի ընդհանուր Ակեղեցւոյ հաղորդութենէն կարուելով՝ նոր եկեղեցի ձևացուցանող հերձուածողներ և ազանդաւորներ: Արոյ ամենուն և նմաններուն ոչ աստ և ոչ ի հանդերձելումն չիք վրկութիւն: (Բ Օրին Գ 2 ԺԲ 32: Յայտն. ԻԲ 19: Ի Տիմ. Ի 18: Գաղ. Ա 6-9: Ա Յովհ. Ի 19: Եբբ. Ժ 25, 31, 39: Ի Պետր. Ի 19, 20, 22):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆՅԻՑ ԱՆՑԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՑ ՎԱՆՈՒՑ

(Շարժման):

ՎՂՈՒԽ Գ

Գլխաւոր և աստուծոյ և սուրբիցի սուրբիցի:

Հնազոյն աւանդութեամբ հռչակեալ էր ի բազում տեղիս առ բազում բանայոյզ անձինս, որպէս և ժողովողն մեկնութեան Խոսրովու և այլոց սրբոց Հարց՝ Մովսէս վարդապետն Արզնկացի ի մեկնութեան Շարժման Գլխաւորին, յայն բանն « և զխորհուրդն՝ զոր խորհիք՝ լսալանէ Տէր. և զբանն զոր խօսիք մի մնացէ առ ձեզ, » ասէ այսպէս, թէ դեք և թէ մարդիկ անյագաբար միշտ խոկան ի նենգել: Արպէս և ի Սէվանայ կղզոյն անցիցն է յայտ. վասնորոյ և զերգս ասի երգել, ի յայտնիլ դաւածանօղ թշնամեացն: Ազոր ըստ աւանդութեան պատմեն՝ այսպի